ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՑ 2-Ը ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-015-18.02.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի փոփոխության, լրացման հեղինակը	**Օրենքի նախագիծը, նախագծի մասը, որին վերաբերում է առաջարկը**	**Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	**5**
1.	**Պատգամավոր Լենա Նազարյան**	**«2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց**	Նախագիծը ներկայացնել լրամշակված հետևյալ տարբերակով. «**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան** 1. Սույն օրենքով կարգավորվում են 2008 թվականի փետրվարի 19-ին Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքների	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

		աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծ	կապակցությամբ բողոքի հավաքները ցրելու գործողությունների ընթացքում՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները: **Հոդված 2. Աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձինք** 1. Աջակցություն ստանալու իրավունք ունի՝ 1) սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի պատճառով զոհված (մահացած) անձի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով իրավահաջորդի կարգավիճակ ունեցող անձը. 2) այն անձը, որի առողջությանը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունների ժամանակ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս: **Հոդված 3. Աջակցության տրամադրումը**		

			1.Աջակցության ձևը, չափը և տրամադրման կարգը, ինչպես նաև աջակցության տրամադրման համար դիմումի ձևը, կցվող փաստաթղթերի ցանկը և քննարկման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: 2.Աջակցություն ստանալու իրավուք ունեցող անձինք դիմումը կարող են ներկայացնել Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում: **Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: 2. Կառավարությունը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշումն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:»		